

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓԱԹԵԹ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2006

Տվյալ տեղեկատվական փաթեթի նպատակն է հայ հասարակայնությանը ներկայացնել միջազգային խաղաղապահ գործունեության քիչ հայտնի որոշ տեղեկություններ:

ՆԱԽԱԲԱՆ

Հայության ամենահիմնական խնդիրը եղել ու մնում է ֆիզիկական անվտանգության խնդիրը: Անիի անկումից ի վեր այս հարցը լուծում չի գտել մինչև 20-րդ դարը: Խորհրդային համակարգում կարճատև ու մասնակի լուծում գտնելով, անկախություն ստանալուց հետո այն նորից դարձավ առաջնահերթ:

Քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ ցեղասպանվելուց հետո, ցեղասպանության կրկնությունը Խորհրդային Ադրբեջանում տեսնելուց հետո, հայությունը եկավ այն եզրակացության, որ ազգային անվտանգության հարցը պետք է լուծի, և կարող է լուծել միայն հայը: Այս պարզ ու ճշմարիտ գաղափարին հասնելուն պես, առաջին հաղթանակն իրեն սպասեցնել չտվեց: Հարմար բնական սահմաններ ունեցող 42.000 կմ² մակերեսով տարածքում քիչ թե շատ հաջողությամբ լուծվեց հայ ազգի ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը :

Թվում էր, թե այսքանից հետո «հային կարող է պաշտպանել միայն հայը» թեզը պետք է ամրագրվեր որպես պետական անվտանգության հայեցակարգի հիմնադրույթ և բոլոր հետագա որոշումները պետք է հենվեին այս պարզագույն աքսիոմի վրա:

Ցավոք, դա տեղի չունեցավ, և այսօր, որոշ քաղաքական ուժեր, ինչ-ինչ արտաքին ու ներքին ազդեցությունների տակ կասկածի տակ են դնում այս աքսիոմը, առաջարկում ազգի անվտանգության ապահովման խնդրի լուծումը թողնել միջազգային խաղաղապահ ուժերին: Բայց արդյո՞ք հայտնի է տարածաշրջան երրորդ ուժ մտցնելու կողմնակիցներին, թե ինչ է այսօր իրենից ներկայացնում միջազգային խաղաղապահ համակարգը, ինչքանով են կարողացել լուծել իրենց առաջ դրված խնդիրները միջազգային մանդատներով գործող խաղապահ գորամիավորումները աշխարհի տարբեր մասերում:

Ուսումնասիրելով խաղաղապահության նորագույն պատմության բազմաթիվ դրվագներ, սույն փաստաթղթի հեղինակները չզտան և ոչ մի դեպք, երբ միջազգային մանդատով խաղաղապահները լուրջ դիմադրություն ցույց տված լինեն այն զինված խմբավորումներին, որոնցից պարտավոր էին պաշտպանել խաղաղ բնակչությանը: Անգամ ՄԱԿ-ի հաշվետու զեկույցներում ընդունվում է այդ փաստը: Այդպիսի զեկույցներից (2001 թ.) մեկի հեղինակ, ալժիրցի Լախդար Բրահիմին խոստովանում է, որ ՄԱԿ-ի խաղաղարար գործողությունների անհաջողությունները կրում են շարունակական և համակարգային բնույթ [4]: Չկա որևէ նախանշան, որ ապագայում այս իրավիճակը կփոխվի:

1. ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆԿԱԾ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Ցեղասպանություն Ռուանդայում (ապրիլ – հունիս, 1994 թ.)

1990-1993 թթ. Ռուանդայում ընթանում էին քաղաքացիական բախումներ երկու ժողովուրդների միջև՝ հուբունների (կառավարական) և թուբսիների (ապստամբ) ուժերի միջև: 1993 թվականի վերջում կնքվեց հրադադար և ղեկտեմբերին Ռուանդա մտավ ՄԱԿ-ի խաղաղապահ զորախումբը: Նպատակ էր դրվել երկու տարում երկիրը ժողովրդավարացնել և անցկացնել ընտրություններ համատեղ կառավարություն ձևավորելու համար: Չնայած այդ պայմանագրին, երկրում մեծամասնություն կազմող հուբունները շարունակում էին ատելություն քարոզել թուբսիների հանդեպ, նաև զենք ու զինամթերք կուտակել: Հատկանշական է, որ հուբունները զենք էին ձեռք բերում ՄԱԳ-ի (Միջազգային Արժույթային Հիմնադրամի) կողմից տրված վարկերի շնորհիվ, որոնք իբր թե ուղղված էին նպաստելու խաղաղության ամրապնդմանը [2]:

1994 թ. սկզբին իրավիճակը երկրում կտրուկ սրվեց: Ռուանդայի ցեղասպանությանը վերաբերող զեկույցներից մեկում (հեղինակը Լինդա Մելվերն, 2001 թ. [4]) հայտնվում է այն մասին, որ կանադացի գեներալ Ռոմեո Դալլերը, որը ղեկավարում էր ՄԱԿ-ի զորախումբը, կանխազգալով մոտավորապես բախումները, իր վերադասներից խնդրեց ավելացնել ՄԱԿ-ի զորախմբի քանակը: Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան ՄԱԿ-ի ԱԽ-ում նշեցին, որ այս առաքելությունը փոքրածավալ է և հնարավոր չէ նոր զորքեր ուղարկել տարածաշրջան: 1994-ի հունվարի 11-ին Դալլերը ֆաքսով հաղորդագրություն ուղարկեց, որտեղ վերլուծելով բազմաթիվ փաստեր, նշում էր, որ նախապատրաստվում է ցեղասպանություն [4]: Բացի այդ, միջազգային մամուլում նույնպես հայտնվում էին տեղեկություններ այն մասին, որ Ռուանդայում իրավիճակը պայթյունավտանգ է: Չնայած այդ բոլորին, երբ ՄԱԿ-ում հերթական անգամ քննարկվեց Ռուանդայի հարցը, հնչեցին կարծիքներ, որ պետք է արագ վերջացնել ժողովրդավարացումը և խաղաղապահներին դուրս բերել ու տեղափոխել ավելի հրատապ վայրեր, ինչպիսին, օրինակ, Հարավսլավիան է:

1994-ի ապրիլին մի քանի բելգիացի խաղաղապահների սպանությունից հետո, ՄԱԿ-ի զորախմբերը լիովին դադարեց վերահսկել իրավիճակը երկրում: Ցեղասպանության սկզբից վեց օր առաջ միջազգային բոլոր կառույցների ներկայացուցիչները շտապ լքեցին երկիրը, իսկ խաղաղարների նյութատեխնիկական մատակարարումը ընդհատվեց: Խաղաղապահները նույնիսկ վառելիք չունեին: Խնդիրը ոչ այնքան երկրում տիրող իրավիճակն էր, այլ ֆինանսավորման սղությունը [4]: Խայտառակության գագաթնակետը դարձավ ապրիլի 21-ը, երբ արդեն երկու շաբաթ է, ինչ Ռուանդայում սկսվել էին լայնածավալ կոտորածները: Այդ օրը ՄԱԿ-ը որոշում կայացրեց հետ կանչել իր զորախմբի մեծ մասին [4]: Հաջորդ իսկ օրը, երբ խաղաղապահները դեռ երկրում ներկա էին, բայց արդեն իրավական մանդատ չունեին, Բուտուր քաղաքի հիվանդանոցներից մեկում կատարվեց սպանո: Միջազգային ուժերի ու նաև «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության ներկայացուցիչների աչքի առաջ, տեղի ունեցավ 172 թուբսիների կոտորած մի խումբ հուբու զինվորների կողմից [4]: Մայրաքաղաքի կենտրոնական համալսարաններից մեկում թուբսի ուսանողների զանգվածային զնդակահարություն տեղի ունեցավ, ընդ որում, խաղապահների կենտրոնակայանը գտնվում էր մոտակայքում [4]: Արդյունքում հուբունները 100 օրվա ընթացքում անխնա կերպով, հիմնականում սառը զենքով կոտորեցին 800.000 թուբսիների: Արյունահեղությունը դադարեց միայն այն ժամանակ, երբ հարևան Չադիից (այժմյան Կոնգո) Ռուանդա մուտք գործեցին տեղի թուբսիների զինված ուժերը, որոնց աջակցում էին նաև Ուգանդայի թուբսիները [2] ու պարտության մատնեցին ցեղասպանության կազմակերպիչներին ու նրանց զինված խմբերին:

Փաստորեն ցեղասպանությունը հնարավոր դարձավ միայն այն բանից հետո, երբ թուբսիները հավատացին միջազգային երաշխիքներին ու զենքերը վայր դրեցին, կարծելով, որ ՄԱԿ-ի զորքերը իրենց կպաշտպանեն:

1.2. Բոսնիա-Յերցեգովինա Սրբերենիցա (հուլիս, 1995 թ.)

Քսաներորդ դարի վերջում Եվրոպայում կատարված ռազմական հանցագործություններից թերևս ամենաշատ լուսաբանվածը Սրբերենիցայի (Բոսնիա-Յերցեգովինա, նախկին Հարավսլավիա) մահմեդական տղամարդկանց զանգվածային գնդակահարումն է 1995 թ. հուլիսին: Հարավսլավիա պետության տրոհումից հետո Բոսնիա-Յերցեգովինան հռչակեց իր անկախությունը: Բոսնիայում կողք կողքի բնակվում էին սերբեր, մահմեդականներ ու խորվաթներ: Անկախություն հռչակելուց հետո այդ երեք համայնքները սկսեցին պատերազմել միմյանց դեմ՝ ձգտելով վերահսկողություն հաստատել ինչքան հնարավոր է մեծ տարածքների վրա: Բոսնիայի Սրբերենիցա քաղաքը մինչ պատերազմը ունեցել է մահմեդա-սերբական խառը բնակչություն: Մահմեդականները էթնիկ զուտում կատարելով, այն վերցրել էին իրենց լիակատար վերահսկողության տակ, բայց հայտնվել էին անկլավային վիճակում: Այդ պատճառով Սրբերենիցան 1993 թվականին ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ հայտարարվեց «անվտանգության գոտի ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերի հովանու ներքո»: Այդ շրջան սկզբից մտցվեց կանադական զորախումբ, որին հետագայում փոխարինեց հոլանդական 500 հոգանոց զորախումբը [9]: 1995 թ. ամռանը այնտեղ հասան նաև ուկրաինական խաղաղապահներ: Չնայած խաղաղապահների ներկայությանը, մահմեդականները Սրբերենիցա քաղաքը դարձրեցին ռազմական հենակետ, որտեղից պարբերաբար հարձակումներ էին գործում շրջակա սերբական բնակավայրերի վրա: Ըստ սերբական տվյալների, [8] Սրբերենիցայում գործում էին նաև Մերձավոր Արևելքից եկած մոջահեդների խմբավորումներ: 1995 թ. ամռանը սերբական ուժերը որոշեցին գրավել քաղաքը: Ի դեպ, մահմեդականների հարձակումներից մեկի դրդապատճառ էր դարձել մահմեդականների դիրքերի ռմբահարումը խաղաղապահների կողմից, որը մահմեդականները սխալմամբ ընկալել են որպես սերբերի կողմից հարված [13]: Այսպիսով չի կարելի բացառել, որ խաղաղարներն են դարձել սպանող բորբոքող գործոն:

Հոլանդական խաղաղարար գումարտակը Թոմ Կարեմանսի գլխավորությամբ ներկա լինելով Սրբերենիցայի անկմանը, այնուամենայնիվ, ոչ մի քայլ չձեռնարկեց՝ ոչ սերբական ուժերի առաջխաղացումը, ոչ քաղաքի գրավումը, և ոչ էլ խաղաղ բնակիչների նկատմամբ հետագա հաշվեհարդարը կանխելու համար [9]: Հոլլանդացի կապիտան Յենրիկ Վան Դեր Վասիը, որին պաշտոնանկ արեցին հետագայում, իր հարցազրույցներից մեկում նշել է, որ իրենց հրաման չէր տրված փրկել մահմեդական խաղաղ բնակչությանը [9]: Համարվում է, որ Սրբերենիցայի անկումից հետո բոսնիական սերբերը առանձնացրել են 8000 մահմեդական տղամարդկանց, տարել նրանց քաղաքից դուրս և այնտեղ գնդակահարել:

Այսպիսով ևս մի անգամ ակնհայտ է դառնում, որ միջազգային խաղաղապահների մուտքը մի տարածաշրջան, ուր դեռ չկա հիմնավոր խաղաղություն, շատ դեպքերում ոչ թե խաղաղեցնում, այլ ընդհակառակը՝ խթան է դառնում բազմապիսի սադրանքների ու զանգվածային սպանդների համար:

Հետագայում Նիդերլանդներում կատարվեց մեծ հետաքննություն, որի արդյունքում ճանաչվեց հոլանդական խաղաղապահների մասնակի մեղքը: Չնայած աղմկալի պաշտոնաթողություններին, տեղի չունեցավ խաղաղապահների կրավորական պահվածքի և ոչ մի որոշակի դատապարտում: Հրաժարական տվեց նաև Նիդերլանդների վարչապետ Վիմ Բոքը [9]:

2. ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երբ 1994 թվականին ՄԱԿ-ի խաղաղարարները դուրս եկան Սոմալիից, միջազգային մամուլը բավականին բուռն արձագանքեց այդ դեպքերին: Սոմալիական զինված խմբավորումները ընդհարվելով ամերիկյան զորքերի հետ, բավականին ծանր հոգեբանական հարված հասցրեցին վերջիններին: Սպանվեց 18 ամերիկացի զինվոր, որից հետո ամերիկյան կառավարությունը որոշեց դուրս բերել ամերիկյան զորքը Սոմալիից:

Այս իրադարձությունները բավականին հայտնի են, սակայն շատերին հայտնի չեն դրան նախորդած իրադարձությունները, որոնք հարկադրեցին սոմալեցիներին դիմել այդպիսի ծայրահեղ քայլերի [3]:



1995 թ. հունիսի 24-ին ամերիկյան «Village Voice» շաբաթաթերթը հրատարակեց վերը պատկերված նկարը, ուր երկու բելգիացի խաղաղապահներ կրակի վրա տանջում են մի անչափահաս սոմալեցու: Այս սահմնվեցուցիչ նկարի ի հայտ գալուց հետո հայտնվեց նաև բազմաթիվ այլ նկարներ ու վկայություններ, որոնցից ակնհայտ էր դառնում, որ, այսպես կոչված խաղաղապահների վարքը Սոմալիում եղել է ծայրահեղ անմարդկային: Հայտնի են դեպքեր, երբ խաղաղապահները ձերբակալվածներին պահել են կիզիչ արևի տակ դրված մետաղական բեռնարկղերի մեջ, ուր վերջինները ջրազրկումից մահացել են: Նույն շաբաթաթերթը իր մյուս համարներում հրատարակեց լուսանկարներ, ուր սոմալեցիներին ծեծի էին ենթարկում, իսկ երեխաներին ստիպում են որդեր ու ճիճուներ կուլ տալ:

Ինչ վերաբերվում է վերը տպագրված լուսանկարում պատկերված զինվորներին, ապա հետաքննության արդյունքում եկան այն եզրակացության, որ դա «անվնաս մի խաղ» էր, որի նպատակն էր «պատժել» այդ սոմալեցի պատանուն գողություն կատարելու համար:

Հետագայում պարզվեց, որ նման դաժանություններ իրենց թույլ են տվել նաև կանադացի ու իտալացի զինվորականները: Իտալացի զինվորները Սոմալիում մեղադրվեցին բռնաբարությունների, կտտանքների, թմրադեղերի առևտրի և նույնիսկ մի քանի սպանությունների մեջ: Իտալիայի կառավարությունը հատուկ հանձնաժողով ստեղծեց, որը զբաղվեց այդ գործերի քննությամբ: Արդյունքում պարզվեց, որ նման վարքագիծը կրել է

տարածված բնույթ և չի հանդիսացել առանձին տարրերի կողմից ծայրահեղության դրսևորում:

Կանադական գորախմբի հետ կապված մմանատիպ դեպքեր գրանցվել են նաև Բոսնիայում: «New York Times» թերթը 1995 թ. հունվարի 18-ի համարում հաղորդել է, թե ինչպես Բակովիչի քաղաքի հոգեբուժարանը պաշտպանող զորախումբը այն վերածել էր ավազակաորջի, ուր խաղաղապահները զբաղվում էին հարբեցողությամբ, սեռական բնականոն հարաբերությունների մեջ էին մտնում բուժքույրների և թարգմանիչների հետ, նաև հիվանդներին էին ստորացնում:

«USA Today» թերթը 1996 թ. ապրիլի 12-ի համարում պատմեց այն մասին, թե ինչպես են Լիբերիայի մայրաքաղաքի հայտնի թալանի ժամանակ օգտագործվել ՄԱԿ-ի խաղաղապահների մեքենաները, ինչից խաղաղապահները փայաբաժին են ստացել:

Մեկ այլ ամերիկյան թերթ՝ «Washington Times»-ը, իր նույն տարվա օգոստոսի 6-ի համարում նշում է, որ Բոսնիայում գտնվող ՄԱԿ-ի հորդանանցի բարձրաստիճան աշխատակիցները զբաղվել են մաքսանենգությամբ, օգտագործելով պաշտոնական մեքենաները: Փոխարենը բոսնիացիք նրանց տրամադրել են մարմնավաճառների ծառայություններ:

Վերջերս Էյ-Բի-Սի ամերիկյան հեռուստաընկերությունը հաղորդեց մանրամասնություններ 2004 թվականին Կոնգոյում խաղաղարարների վարք ու բարքի մասին: Անչափահաս աղջիկների բռնաբարման ու նրանց հանդեպ սեռական ոտնձգությունների բազմաթիվ դեպքեր էին արձանագրվել: ՄԱԿ-ի բարձրաստիճան մի պաշտոնյա՝ ազգությամբ ֆրանսիացի Դիդիե Բուրգեն, անչափահասների հետ սեռական հարաբերությունների լուսանկարներ ու տեսանյութեր էր ստեղծում, որոնք տեղադրվում էին պեդոֆիլների ինտերնետ կայքերում: Սի հարավաֆրիկացի սպա պարտադրել էր իր երիտասարդ թարգմանիչներին սեռական հարաբերությունների մեջ մտնել իր հետ, նաև արձանագրվել են հարյուրավոր երեխաների ծննդաբերություններ տեղացի անչափահաս աղջիկների կողմից: Այդ նորածինների «հայրերը» օտարերկրյա խաղաղարարներն են, իսկ մայրերը՝ այն աղջիկները, որոնք ստիպված էին ապահովել իրենց գոյությունը, զբաղվելով մարմնավաճառությամբ: Նորածինների մեծ մասը լքվել են իրենց անչափահաս մայրերի կողմից ու դարձել ծնողազուրկ: Էյ-Բի-Սի լրագրողները հաղորդել են բազմաթիվ խայտառակ այլ մանրամասնություններ, օրինակ, այն մասին, որ խաղաղապահները նախընտրում են մանկահասակ աղջիկների, քանի որ վախեցել են վարակվել ՄԻԱՎ/ԶԻՎՅ-ով: ՄԱԿ-ի քաղաքացիական աշխատակիցները երեկոները անցկացրել են գիշերային ակումբներում, չնայած դա իրենց խստիվ արգելված է ըստ կանոնակարգի: Սակայն նրանց արարքները չեն պատժվել տեղական օրենքներով, որովհետև նրանք ունեն իրավական անձեռնմխելիություն [14]:

Կոնգոյում խաղաղապահների պահվածքի մասին հավելյալ նյութեր են ներկայացվում նաև 4.2 ենթագլխում:

3. ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կոսովո (1999 – 2005 թթ.)

Ազգամիջյան բախումների ժամանակ պատմամշակութային արժեքները հաճախ թիրախ են դառնում հակամարտող կողմերի համար, քանի որ ընկալվում են որպես հակամարտության այս կամ այն կողմի արդար պայքարի խորհրդանիշ:

Խաղաղապահները, որոնք պարտավոր են խաղաղությունն ապահովելու, պետք է պաշտպանեն այդպիսի հուշարձանները: Ցավոք, փորձը ցույց է տալիս, որ դա չի կատարվում, և ընդհակառակը՝ մշակութային արժեքների ոչնչացումն էլ ավելի է սաստկանում, երբ ակտիվ պատերազմական գործողություններ վարելը դժվարանում է:

Ստորև բերված երկու լուսանկարներում պատկերված են Կոսովոյում 2004 թ. մարտին ավերված սերբական եկեղեցիներ.



Սերբիայի Ուղղափառ եկեղեցու կայքում կան բազմաթիվ տվյալներ Կոսովոյում սերբական եկեղեցիների վիճակի մասին. <http://www.spc.org.yu/Vesti-2004/pogrom.html>

Կոսովոն պատմականորեն եղել է սերբերի հոգևոր կենտրոնը: 10-13-րդ դարերում Կոսովոյում կառուցվել են ուղղափառ-քրիստոնեական հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր: 2004 թ. մարտին Կոսովոյում ալբանացիները սկսեցին հակասերբական ջարդեր: 3000 սերբեր փախստական դարձան, 30 մարդ սպանվեց, վիրավորվեց 500 հոգի, որոնցից 35-ը՝ խաղաղապահներ: Մի քանի օրում ավերվեցին 35 եկեղեցիներ: Ըստ սերբական ուղղափառ եկեղեցու տվյալների, 1999 – 2004 թթ. ընթացքում Կոսովոյում քանդվել կամ հրկիզվել է մոտ 200 եկեղեցի և վանք: Անհեթեթ է, բայց փաստ է. Կոսովոյում վերջին 5 տարում քանդվեց ու ավերվեց ավելի շատ քրիստոնեական հուշարձաններ, քան օսմանյան տիրապետության մի քանի դարերի ընթացքում [10]:

Որպեսզի տպավորություն չառաջանա, որ բերվում են միայն սերբական կողմի տվյալները, մեջբերենք «Human Rights Watch» միջազգային կազմակերպության Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ռեյչել Դենբերի հայտարարությունը. «ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի համար Կոսովոն դարձավ ամենալուրջ քննությունը 1999 թվականից հետո, երբ միջազգային հանրության աչքի առաջ փոքրամասնության ներկայացուցիչներին քշում էին իրենց բնակության վայրերից: Նրանք ձախողեցին այդ քննությունը: Նրանք նախընտրեցին նայել հրկիզվող սերբական տներին իրենց ռազմակայանների փակ դարպասների հետևից» [11]:

Փաստորեն խաղաղապահները չկասեցրին մշակութային ջարդը, որի նպատակն էր ջնջել սերբական հետքը Կոսովոյից:

4. ԽԱՂԱՂԱՊԱՅ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ: ՏՐԱՖԻԿՆԳ, ԹՄՐԱԴԵՂԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ, ԿԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ, ՊԵՐՊՅԻԼԻԱ ԵՎ ԱՅԼՆ

Հայտնի է, որ այլազգի մեծաքանակ, թեկուզ և ոչ թշնամական զորքերի հայտնվելը միշտ իր հետ բերում է բազմաթիվ նոր սոցիալական երևույթներ: Կամա թե ականա՝ այդ զինվորները դառնում են հանցագործ տարրերի ակտիվացման խթան: Նկատվում է կավատության, թմրադեղերի առուվաճառքի և այլ տիպի զանցանքների աճ:

4.1 Կոսովո (2000 – 2004 թթ.)

Ըստ Բի-Բի-Սի հաղորդագրության «Ամենաթի Ինթերնեյշնլը» իր զեկույցներից մեկում նկարագրել է Կոսովոյում տիրող իրավիճակը [5]: 1999 թվականին, երբ այնտեղ հայտնվեց 40.000-անոց միջազգային զորախումբը այն հաստատությունների քանակը, որտեղ օգտագործվում էին թրաֆիքինգի զոհեր, աճեց 18-ից մինչև 200-ի: Այդ հաստատությունները վերահսկվում են հանցագործ խմբավորումների կողմից, նաև հայտնի են որոշ խաղաղապահների ներգրավածության դեպքեր այդ ծաղկող «բիզնեսի» մեջ: Աղջիկները, որոնք դարձել են սեռական առևտրի առարկա, ոչ միայն տեղաբնակներ են, այլև բերվում են Մոլդովայից, Ուկրաինայից, Բուլղարիայից: Աղջիկներին բերում են խաբեությամբ, ապագայում նորմալ աշխատանք խոստանալով, նաև բռնի ուժով, կամ էլ դիմադրությունը կոտրում են թմրադեղեր ներարկելով: Կան նաև 11-12 տարեկան մանկահասակ աղջիկներ, որոնք դարձել են սեռական ստրուկներ՝ մշտական ծեծի միջոցով ստիպվել են պոռնկությամբ զբաղվել:

Ըստ «Ամենաթի Ինթերնեյշնլի» զեկույցի, չնայած այն փաստին, որ խաղաղապահ զինվորներին արգելված է հաճախել գիշերային ակումբներ, միևնույն է, այդ հաստատությունների հիմնական հաճախորդները հենց խաղաղար զինվորներն են:

Ձեկույցում նաև խորհուրդ է տրվում ուժգնացնել այդ ամոթալի երևույթի դեմ պայքարը, որը մինչ այժմ կրել է ընդամենը խորհրդանշական բնույթ: Քանի որ K-for-ի խաղաղարարները և միջազգային ադմինիստրացիան ունեն իրավաբանական անձեռնմխելիություն, ապա նրանց հնարավոր չէ պատասխանատվության ենթարկել Կոսովոյում: Առավել լայն կարող են նրանց հետ ուղարկել իրենց երկրներ, որտեղ էլ նրանց ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկի: 2003 թվականի վերջի դրությամբ մոտ 10 հոգի ենթարկվել է այդպիսի «տույժ»-ի, իսկ մոտ 22-27 խաղաղարար սպաներ կասկածվել են թրաֆիքինգի մեջ: Ձևական տույժերը և անպատժելիության մթնոլորտը նպաստում է սեռական ստրկության ամոթալի «բիզնեսի» վերելքին Կոսովոյում, և չկան նախանշաններ, որ մոտ ապագայում իրավիճակը կփոխվի:

Այս նույն փաստերը հաստատվում են բազմաթիվ այլ կազմակերպությունների կողմից: Կանանց իրավապաշտպան կազմակերպություններից մեկը [Women's International League for Peace and Freedom [6]] պատմել է բազմաթիվ աղջիկների կոտրված կյանքերի մասին: Բռնաբարությունների, պարզապես փողոցից փախցնելու պատմություններ, որոնք ուղղակիորեն կապված չեն խաղաղարարների հետ, բայց կատարվել են նրանց պատասխանատվության գոտիներում և մնացել են անպատիժ:

4.2 Կոնգո (մայիս – սեպտեմբեր, 2004 թ.)

Կոսովոն այս առումով բացառություն չէ: ՄԱԿ-ի Ներքին Վերահսկողության զեկույցներից մեկը պատմում է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված խաղաղապահների խայտառակ պահվածքի մասին: Խաղաղարարները մտել են սեռական հարաբերությունների մեջ անչափահաս աղջիկների հետ, վճարելով նրանց 1-2 դոլլար կամ տալով սննդամթերք [7]: Այդ երեխաների մեծ մասը որբացել են Կոնգոյում մոլեգնած պատերազմի ընթացքում: Շատերը բռնաբարվել են պատերազմի ընթացքում և այսօր իրենց գոյատևման միակ ձևը դարձել է մարմնավաճառությունը: Բազմաթիվ երիտասարդ կոնգոցի տղաներ մասնագիտացել են կավատության մեջ և զինվորների համար աղջիկներ են բերում:

ՄԱԿ-ի զորախմբի անձնակազմից 72-ը կասկածվում են տարբեր տիպի սեռական հանցանքների մեջ: Մի մասը խուսափել է պատասխանատվությունից՝ վերադառնալով իրենց հարազատ երկրներ, մյուսների գործերը կարճվել են: Այսօրվա դրությամբ ընդամենը մի հոգի է գտնվում դատական ատյանների ուշադրության տակ: Դա այն ֆրանսիացին է, որը պեդոֆիլիական բնույթի նկարներ է արտադրել ու տարածել Կոնգոյից:

4.3 Արևելյան Թիմոր (2001 թ.)

Մանկապղծության ավելի զարհուրելի դեպքեր են գրանցվել Արևելյան Թիմորում: 2001 թ. մայիսին ավստրալացի սպա Անդրյու Վաթթենը տեղեկություններ ստացավ, որ հորդանանցի խաղաղարարները մանկահասակ (մինչև 12 տարեկան) տղաների հետ մտել են սեռական հարաբերությունների մեջ, դրա դիմաց տալով սնունդ ու փող: Երբ ավստրալացի խաղաղարարների ղեկավարը փորձել է այդ լուրերը դարձնել հետաքննության առարկա, կտրուկ սրվել են հորդանանցի ու ավստրալացի խաղաղարարների հարաբերությունները, ընդհուպ մինչև զինված պասսիվ դիմակայություն [12]: Քաղաքական նկատառումներով (նկատի ունենալով Հորդանանի կարևոր դերը մերձավոր արևելյան բանակցային գործընթացում) այդ հանցանքը չի ստացել լայն սփռում: ՄԱԿ-ի առաքելությունը, որը ղեկավարում էր Սերջիո Վիերա դե Մելլոն (նա հետագայում սպանվեց ՄԱԿ-ի Բաղադի գրասենյակի պայթյունից) ամեն ինչ արեց, որպեսզի այդ գործը տրվի լռության [12]: Հետագայում կատարվել են հետաքննություններ, որոնք հաստատել են այդ տեղեկությունները և ավելին բացահայտել են այլ հանցանքներ: Օրինակ Արևմտյան Թիմորից կանանց թրաֆիքինգ դեպի Արևելյան Թիմոր, նաև եղել են բռնաբարությունների դեպքեր, որի կազմակերպիչները եղել են հորդանանյան խաղաղարարները:

4.4 Ռուանդա, Քենիա, Կենտրոնական Աֆրիկա (2001 թ.)

Հանցագործությունների ամենատարածված մյուս տեսակը, որի մեջ ներգրավվում են այլազգ խաղաղարարները, անօրինական առևտուրն է: Ինչպես հաղորդում է 2001թ. փետրվարի «Օբսերվեր»-ը, [17] փղոսկրի անօրինական տեղափոխման մեջ է մեղադրվել Ռուանդայում ՄԱԿ-ի առաքելության ղեկավարը: Նրան ձերբակալել են Քենիայում, Նայրոբիի օդանավակայանում, երբ նա փորձել է անօրինական կերպով տեղափոխել փղոսկր և այլ կենդանիների մորթիներ: Փղոսկրի առևտուրը միջազգայնորեն արգելվել էր 1990-ին: Բայց վերջին շրջանում այն նորից ակտիվացել է ֆրանսիացի խաղաղարարների ներկայության պատճառով: Ըստ անգլիական «Փրկեք փղերին» կազմակերպության ներկայացուցիչ դոկտոր Էսմոնդ Մարտինի, փղոսկրի պահանջարկը գալիս է հիմնականում ՄԱԿ-ի աշխատակիցներից և տեղում տեղակայված դիվանագիտական կորպուսի աշխատակիցներից: Եթե պահանջարկի աճն այսպես շարունակվի, ապա նորից կվերսկսվի փղերի զանգվածային ջարդը, ինչը դա կատարվում էր 1970-80 թվականներին, որի արդյունքում էլ դրվեց արգելքը:

5. ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՉԵՏ ԿԱՊՎԱԾ ԶԱՐՑԵՐ

Խաղաղապահ առաքելությունների մի այլ կարևոր, բայց անտեսված կողմ է իրավականը: Վերոնշյալ բոլոր դեպքերում, հանցագործություն կատարած խաղաղապահները շնորհիվ իրավական անձեռնմխելիության հանցանքի վայրում պատիժ չեն կրում: Սա ստեղծում է անպատժելիության մթնոլորտ, որովհետև խաղաղապահին սպառնացող ամենամեծ պատիժը՝ հայրենի երկրում դատավարությունն է, որին սովորաբար ներկա չեն լինում տուժածներն ու վկաները, ինչի հետևանքով դատական գործերը, մեծ մասամբ, կարճվում են:

Երկրորդ կետը, որը խաղաղապահությանն ապավինելը դարձնում անհույս գործ, լիազորությունների մանդատն է: Չնայած պատասխանատվության լիակատար բացակայությանը, խաղաղապահներն իրավունք չունեն ինքնուրույն որոշումներ ընդունել: Երկու բախվող կողմերին բաժանելու համար, նրանք պետք է սպասեն հրամանների կենտրոնական շտաբներից, որոնք էլ, իրենց հերթին, իրենց վերադաս քաղաքական մարմիններից: Իսկ քանի որ քաղաքական էլիտաները միշտ զբաղված են աշխարհաքաղաքական գլոբալ հարցերով, ապա ստացվում է, որ տեղացիները, որոնց խաղաղեցնում են խաղաղապահները դառնում են պատանդ աշխարհաքաղաքական գործընթացների մեջ:

Մյուս կետն այն իրավիճակներն են, երբ պայմանավորվածությունները հաշվի չեն առնում դեպքերի բոլոր հնարավոր զարգացումները: Այդ իրավական անորոշություններից օգտվում է կողմերից մեկը և ձեռք բերում առավելություն, որն էլ առիթ է դառնում նոր բախումների: Օրինակ՝ Երիթրեա-եթովպական (2003 – 2004 թթ.) զծին տեղակայված խաղաղարարների դեպքը, երբ Երիթրեան մեղադրում էր ՄԱԿ-ին պարտավորությունները չկատարելու մեջ, իսկ ՄԱԿ-ն իր հերթին մեղադրում էր Երիթրեային՝ արհեստական խոչընդոտներ ստեղծելու մեջ [15]:

Սակայն ամենացայտուն օրինակը, որտեղ երևում է, թե ինչքան անհուսալի գործոն են խաղաղապահները անվտանգություն ապահովելու համար, Դարֆուրն է՝ Սուդանի նահանգներից մեկը:

5.1 Սուդան, Դարֆուր (2005-2006 թ.)

Սուդանի հարավում և արևմուտքում միջէթնիկական ու միջկրոնական բախումները տևում են արդեն տասնամյակներ: Առանց վարանելու այն կարելի է դասել ցեղասպանությունների շարքը, որ զոհ են գնացել երկու միլիոնից ավելի մարդ, իսկ չորս միլիոն մարդ էլ բռնի տեղահանվել են [18]: Սուդանի կենտրոնական իսլամական կառավարությունը օգտագործում է Ջանջավիդ կոչվող զինված խմբավորումներն ընդդեմ հարավի ժողովրդական Ազատագրական Շարժման, որը պայքարում է տեղի քրիստոնեական բնակչության շահերի համար: Հակամարտությունն էլ ավելի մեծ թեթևություն է ստանում նաֆթային գործոնի պատճառով: Հսկայական տարածքներ հարավում բաժանված են միջազգային հզոր կոնցենցիաների միջև (տես. քարտեզը): Արտոնագրերը, մայրաքաղաք Խարտումում, բաժանում է կենտրոնական իշխանությունը, որին էլ հասնում է եկամուտների մեծ մասը, իսկ հարավը որտեղից հանվում է նաֆթը, գտնվում է աղքատության, սովի ու պատերազմի ճիրաններում: Ահա այսպիսի պայմաններում 2005 թ.-ի հունվարին ՄԱԿ-ի հովանու ներքո կնքվեց «Համապարփակ խաղաղության Համաձայնագիր»-ը (ՀԽՀ), որն ուներ և՛ փուլային, և՛ փաթեթային լուծումներ: Համաձայնագրի մշակման գործում իր ներդրումն ուներ նաև մեզանում տխրահռչակ «Միջազգային ճգնաժամային խումբ» կազմակերպությունը: Համաձայնագրի հիմնական կետերից էին վեց տարի հետո Դարֆուրի հանրաքվեն, և 10.700 խաղաղապահների մուտքը տարածաշրջան: Որպես փոխվստահության խորհրդանիշ, ստեղծվեց նաև Ազգային Համաձայնության Կառավարություն, որի մեջ մտնում էին նաև հարավի Ազատագրական շարժման ներկայացուցիչները:

Չենց սկզբից Խարտումի Իսլամական ճակատ կուսակցությունը սկսեց կատարել այնպիսի քայլեր, որոնք փաստացի սկսեցին ձախողել այդ ՀԽՀ-ի կիրառումը: Առերևույթ ընդունելով այն և ցուցադրական նախարարական պորտֆելներ տալով Ազատագրական շարժման ներկայացուցիչներին, Իսլամական ճակատը ստեղծեց ստվերային կառավարություն, որը սկսեց սաքոտաժի ենթարկել խաղաղության գործընթացը:



Օգտագործելով ջանջավիղյան անվերահսկելի զինված ուժերը, նրանք սկսեցին հարձակումներ միջազգային մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչների վրա: Ավելին խստացվեց վիզային ռեժիմը, ինչը բարդացրեց միջազգային քաղաքացիական անձնակազմի մուտքը Սուդան: Արդյունքում շատ երկրներ, որոնք խոստացել էին զինված խաղաղապահներ ուղարկել տարածաշրջան, չկատարեցին իրենց խոստումը: Մինչ այժմ (արդեն անցել է մեկ տարուց ավելի) տեղակայված է ընդամենը 2.300 հոգիանոց զորամիավորում, որն ի վիճակի չէ հակամարտության գոտում խաղաղությունը ապահովել: Պատճառն այն է, որ խարտումը մինչև հիմա չի տվել իր զորամիավորումների մասին հստակ տեղեկատվություն (ինչը պարտավոր էր անել ըստ ՅԽՅ-ի), և բախումներից խուսափելու համար, ՄԱԿ-ի խաղաղապահները վերահսկում են խիստ սահմանափակ տարածքներ: Այս առնչությամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին մնում է միայն անզոր կերպով հայտարարել, որ Սուդանի զինված ուժերի տված տեղեկատվությունը անբավարար է ՅԽՅ-ի հետագա կատարման համար: Ըստ համաձայնագրի, Սուդանը պետք է

դուրս բերեր իր 48000 հոգիանոց կայազորը հարավի Ջուբա քաղաքից: Մինչև այժմ այդ կետը չի կատարվել, որի վերաբերյալ գնահատականներ չեն տրվում Արևմուտքի կողմից: Արհեստական խժժություններ հրահրելով վերին Նեղոսի շրջաններում, կենտրոնական իշխանությունն էլ ավելի է բարդացնում համաձայնագրի կատարումը, և այդ անկարգությունները օգտագործում է որպես պատճառաբանություն իր կողմից համաձայնագրի կետերը խախտելու համար:

Ավելին Իսլամական ճակատը չի խորշում օգտագործել հարևան երկրներում գործող անկանոն զինված խմբավորումները, որպեսզի էլ ավելի ապակայունացնի վիճակը և կանգնեցնի Արևմուտքին փաստի առաջ, ձախողելով ՅԽՅ-ն: Ուզանդայում գործող ապստամբ «Աստծո դիմադրության բանակը», որը հայտնի է իր անմարդկային դաժանություններով, ազատ ելումուտ ունի Սուդանի հարավային շրջաններ, որտեղ նա պատսպարվում է Ուզանդայի կանոնավոր զորքերի հարձակումներից: Այս իրավիճակում ՄԱԿ-ը և մնացյալ միջազգային հանրությունն այլևս անընդունակ են վերահսկել ՅԽՅ-ի կատարումը, քանի որ իրենք չունեն իրական լծակներ դրա համար: Միջազգային հանրությունը այսօր զբաղված է շատ ավելի իրատապ հարցերով, իսկ Յարավային Սուդանը շարունակում է խրվել քաոսի մեջ:

Յարավի Ազատագրական Շարժման (որոնք, հիշեցնենք, պաշտպանում են սևանոթ քրիստոնեաների շահերը) ղեկավարներից ոմանք զգալով, որ համաձայնագիրն այլևս չի գործում, զուգահեռաբար սկսել են ինքնուրույն ռազմական գործողություններ: Նաև հայտնվել է մի նոր ուժ, որն ընդհանրապես չի ընդունում խաղաղության համաձայնագրի լեգիտիմությունը և տանում է ինքնուրույն քաղաքականություն:

Այսօր իրավիճակը Սուդանի հարավային շրջաններում շարունակում է վատթարանալ: Փախստականների վիճակը բարդանում է, քանի որ միջազգային մարդասիրական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակվել է: Մարդասիրական հիմնա-

կան միջանցքների ապահովությունը երաշխավորված չէ: Աֆրիկյան միության խաղաղապահներն անընդունակ են կարգ ու կանոն պահպանելու: Քրիստոնեական ազատագրական շարժման զինված ուժերը պառակտվել են, իսկ արևմտյան հիմնական տերությունները արդեն զբաղված են այլ հարցերով ինչպիսին է, օրինակ, Իրաքը կամ Իրանը:

Ռուանդայում խաղաղապահների հրամանատար Դալլերը [20], որը համապարփակ ձևով ցույց է տվել Արևմուտքի մեղքի բաժինը Ռուանդայի ցեղասպանության մեջ, հայտարարել է. «Ռուանդայում ցեղասպանությունը հնարավոր եղավ, որովհետև կենտրոնացած էինք Հարավ-սլավիայի վրա: Այսօր Սուդանը զոհաբերվում է Իրաքի պատճառով: Մենք չենք սովորում դասերը, թե ինչպես պետք է կանգնեցվեն էթնիկական գտումները»:

Հարց տանք ինքներս մեզ, ու՞մ համար կզոհաբերվի Արցախը եթե այնտեղ էլ նման իրավիճակ ստեղծվի ապագայում:

5.1 Հաիթի (2006 թ.)

Եվ, վերջապես, խաղաղարարները կարող են ներքաշվել ներքաղաքական պայքարների մեջ: Այդպես տեղի ունեցավ 2006 թվականի փետրվարին Հաիթիում: Նախագահի ընտրությունների ընթացքում նախագահական թեկնածու Ռենե Պրեվալի կողմնակիցները բողոքի արշավ էին սկսել ԿԸՀ-ի դեմ, որին մեղադրում էին խախտումների մեջ ու պահանջում ճանաչել Ռ. Պրեվալին որպես նախագահ: Հաիթիի մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսում տեղակայված ՄԱԿ-ի խաղաղարարները կրակ են բացել ցուցարարների վրա: Մի հոգի սպանվել է, կան բազմաթիվ վիրավորներ [16]:

Այս հաղորդագրությունը ցույց է տալիս, որ «խաղաղարարները» Արցախի հակամարտության գոտում իրականում կարող են միտված լինել պաշտպանելու տեղական վերնախավերին ժողովուրդների արդարացի ցասումից, այլ ոչ թե հենց տեղի բնակչությանը:

Հարցի փաստական կողմը շարադրելուց ակնհայտ է դառնում, որ եթե նույնիսկ միջազգային հանրությունն ուղղորդվի ամենալավագույն ցանկություններով ու կամենա իսկապես խաղաղություն ու անվտանգություն ապահովել հայ ազգի համար, դրա համար տա միջազգային նորմերին համապատասխանող երաշխիքներ, ապա, միևնույն է խաղաղություն չի հաստատվի որովհետև կա վերջին 50 տարվա «խաղաղարար» պատմության դառը փորձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՉ ՀՍՏԱԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Միջազգային խաղաղարարների մասին խոսակցությունների [1] հիմքերից մեկը մեր պաշտոնական դիրքորոշման ընդհանուր և ոչ հստակ ձևակերպումների մեջ է: Հայաստանն իր նախապայմաններից մեկն է համարում ստանալ ԼՂՀ անվտանգության միջազգային երաշխիքներ: Այդ «երաշխիքներ» ասվածը բավականին անորոշ հասկացություն է: Այն կարող է նշանակել, և՛ ԼՂՀ անկախության միջազգային ճանաչում, և՛ միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայում, որոնք միտված կլինեն ապահովելու այդ անվտանգությունը առանց ԼՂՀ կարգավիճակի հարցի հստակեցման:

Միջազգային խաղաղապահ ուժերը չեն կարող լինել անվտանգության երաշխիք. սա ակնհայտ է դառնում, երբ գնում ենք վերջին տարիներին աշխարհի տարբեր մասերում խաղաղապահ ուժերի գործունեությունը, որը և ներկայացված է տվյալ տեղեկատվական փաթեթում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով խաղաղապահ ուժերը չեն կարող լինել անվտանգության երաշխիք նույնիսկ այն դեպքում, եթե կա բարի կամքի դրսևորում խաղաղապահ ուժեր ուղարկած երկրների կողմից: Մեր դեպքում գումարվում են նաև աշխարհաքաղաքական այնպիսի ռիսկեր, որոնք վերահսկել ուղղակի հնարավոր չէ: Ո՞ր երկրները պետք է լինեն խաղաղապահներ, ո՞ր երկրներից չլինեն: Ո՞վքեր են երաշխավորները: Մտնում են արդյոք հզորացող մահմեդական ու արևելասահական տերություններն այդ երաշխավորների մեջ թե՞ ոչ: Եթե չեն մտնում, ապա ինչ կլինի ապագայում իրավիճակի փոփոխության դեպքում, կան և բազմաթիվ այլ հարցեր: Դրանց պետք է գումարել նաև հայ ժողովրդի պատմական դառը փորձը: Եվ որպեսզի չխորանանք մեծածավալ և շատ դեպքերում նույնիսկ անիմաստ աշխարհաքաղաքական գլոբալ վերլուծությունների մեջ, պետք է առաջնորդվենք մի քանի հստակ մոտեցումներով: Դրանք պետք է ոչ միայն մտնեն ազգային անվտանգության ընդհանուր հայեցակարգի մեջ, որն այսօր գտնվում է ձևավորման փուլում, այլև դառնան Հայաստանի պետական դիրքորոշում:

Թվարկենք այդ մոտեցումները.

1. Հայ ազգի ֆիզիկական անվտանգության երաշխավոր կարող է հանդիսանալ միայն հայկական զինված ուժը:

2. Եթե մենք ընդունում ենք այս կետը, ուրեմն մեր պաշտոնական դիրքորոշումից պետք է հանենք այն կետը, որով պահանջում ենք «միջազգայնորեն երաշխավորված անվտանգության երաշխիքներ»: Դրա կարիքն այլևս չկա:

3. Ընդունելով առաջին կետի անխախտելիությունը, մենք նաև փաստում ենք, որ ժամանակակից աշխարհում ընթանում են բազմաթիվ քաղաքական ու տնտեսական գործընթացներ, որոնց անդամակցումը ոչ թե լուծում է անվտանգության, այլ ընթացիկ աշխարհաքաղաքական-տնտեսական խնդիրներ: Այսինքն անդամակցումն այլ գործընթացներին միջոց է, այլ ոչ թե նպատակ կամ առավել ևս՝ անվտանգության երաշխիք:

4. Այդպիսին է անդամակցումը ՀԱՊ-ին: Այդպիսին է նաև համագործակցությունը ՆԱՏՕ-ի և այլ միջազգային կառույցների հետ: Այս կառույցները չեն լուծում ու չեն կարող լուծել մեր ֆիզիկական անվտանգության խնդիրները: Նրանց հետ համագործակցությունը հանդիսանում է ժամանակավոր քաղաքական գործիք:

5. Քաղաքական գործիքները նույնպես տարբեր են լինում, և նրանց տարբերակումը նույնպես պետք է բխի առաջին կետից: Այսինքն՝

5.1 Բոլոր այն երկրներն ու կառույցները, որոնք չեն ընդունում Հայոց Ցեղասպանությունը, չեն կարող համարվել անկողմնակալ ու բարեկամական ուժեր Հայաստանի համար:

5.2 Բոլոր այն երկրները ու կառույցները, որոնք չեն ընդունում Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքը, չեն կարող համարվել հուսալի գործընկերներ Հայաստանի համար:

6. Եվ, վերջապես, բոլոր այն երկրները, որոնք կարծում են, որ իրենց նկատմամբ կան սպառնալիքներ տարածաշրջանում ու ցանկանում են ապահովել իրենց անվտանգությունը՝ ունենալով ռազմական հենակետեր տվյալ տարածաշրջանում, պետք է դրա համար բանակցեն հայկական պետությունների հետ, որոնք վերահսկում են տվյալ տարածքները: Իհարկե, այն դեպքում, եթե նրանք ընդունում են այդ պետությունների անկախությունը ու ինքնիշխանությունը հենց այդ սահմաններում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք հատուկ չնշեցինք հայկական պատմական փորձը՝ կապված «խաղաղարարների» հետ: Կարելի էր, օրինակ հիշել «Կոլցո» օպերացիան, որը հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ հայերը իրենք օգնություն խնդրեցին Խորհրդային բանակից: Կարելի էր հիշել Սումգայիթը և Խորհրդային բանակի հանցավոր անտարբերությունը: Իսկ եթե խորհրդային բանակը չի համապատասխանում միջազգային խաղաղարարների չափանիշներին, ապա կարելի է հիշել ֆրանսիական բանակի պահվածքը Կիլիկիայում: Կարելի էր հիշել նաև անգլիական սպայակազմի պահվածքը Արցախում 1919 թ., որը չթողեց Անդրանիկին մտնել Արցախ՝ մեկնաբանելով դա խաղաղարարական նպատակներով: Այն ժամանակվա խաղաղարարներն էլ անգլիացիներն էին Անդրկովկասում: Եվ, վերջապես, կարելի էր հիշել Գուրգեն Մարգարյանի սպանությունը Եվրոպայի սրտում, ՆԱՏՕ-ի հովանու տակ: Եվ ՆԱՏՕ-ի կրավորական պահվածքը, որը նույնիսկ չկամեցավ հստակ դատապարտել Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը, որի արդյունքում կատարվեց այդ սպանությունը:

Եթե այսօր ՆԱՏՕ-ն պատրաստ չէ ընդունել իր անընդունակությունը՝ Եվրոպայի սրտում մի հայի պաշտպանելու գործում, ապա կարելի է չկասկածել, որ նույն ձևով էլ վաղը «պաշտպանելու» է հայերին, եթե, իհարկե, հայերն իրենց համաձայնությունը տան խաղաղարարների մուտքին:

Միթե, վերջապես, գոնե մեկ անգամ մեր հազարամյա պատմության մեջ չենք ելնելու և ասելու նրանց ովքեր ուզում են մեզ «պաշտպանել», որ չենք հավատում ձեր երաշխիքներին: Չենք հավատում, որովհետև դուք չեք ընդունում մեր ապրելու տարրական իրավունքը այս հողի վրա:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- [1] Վարդան Օսկանյանի արված հայտարարությունը 2006 թ. հունվարին, երբ նա չբացառեց խաղաղարների մուտքը (ARMENIAN MINISTER CAUTIOUS ABOUT OSCE PEACEKEEPERS' VISIT TO KARABAKH, 10-Jan-06, Arminfo):
- [2] <http://genocide.ru/lib/genocides/rwanda.htm>
- [3] <http://www.whatreallyhappened.com/RANCHO/POLITICS/UN/peace.html>
- [4] <http://www.africacentre.org.uk/archiverwanda.htm>

Linda Melvern, author of "A People Betrayed: The Role of the West in Rwanda's Genocide"; Alexander Ramsbotham, UN and Conflict Unit, United Nations Association-UK
HE Mrs Rosemary Museminali, Rwandan Ambassador
- [5] <http://news.bbc.co.uk/1/hi/world/europe/3686173.stm>
- [6] <http://www.peacewomen.org/news/Kosovo/newsarchive02/kosovosex.html>
- [7] <http://www.cnn.com/2005/WORLD/africa/01/08/congo.peacekeepers.sex/>
- [8] Михаил Кожемякин, Сребреница. История и загадки трагедии. Эхо Планеты (Москва). 29.07.2005, стр. 22-24.
- [9] Капитан Королевских вооруженных сил Нидерландов - "Газете", Хенрик ван дер Ваах. «Газета» (Москва). 23.12.2005, стр. 15.
- [10] <http://www.spc.org.yu/Vesti-2004/pogrom.html>

http://religion.ng.ru/printed/facts/2004-04-07/1_albania.html
- [11] <http://hrw.org/russian/docs/2004/07/27/serbia9143.htm>
- [12] http://www.natashatynes.org/newswire/2005/03/jordanian_soldi.html

http://www.natashatynes.org/newswire/2005/03/hushed_rape_of_.html
- [13] Трибуна (Москва). - 25.08.2001. - 151. - С 3 Максим РЫБКИН. (Соб. корр. "Трибуны").
- [14] <http://abcnews.go.com/2020/UnitedNations/story?id=489306&page=1>
- [15] <http://www.afrol.com/articles/17157>
- [16] <http://www.euronews.net/>
- [17] <http://www.globalpolicy.org/security/peacekpg/reform/criticism/0211smg.htm>
- [18] <http://genocide.ru/lib/genocides/>
- [19] <http://www.sudanreeves.org/index.php?name=News&file=article&sid=70>
- [20] http://www.sudantribune.com/article.php3?id_article=8108